

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Էկոլոգիայի Բնապահպանություն և բնօգտագործում ամբիոնի  
բենչմարկինգի համար անհրաժեշտ դասավանդվող առարկայի համեմատական  
բնութագիր

**Գործընկեր ԲՈՒՀ** – *Իտալիայի Տուշայի համալսարան*

**Ղեկավարամենտ** – Էկոլոգիայի և կենսաբանության

Առարկայի անվանումը ԳԿՄԿ-ում – Էկոթունաբանություն

Առարկայի անվանումը գործընկեր ԲՈՒՀ-ում – Կիրառական էկոլոգիա և  
Էկոթունաբանություն (նախատեսված ծովային էկոլոգիա մագիստրոսական ծրագրի  
համար)

Թունաբանություն – նախատեսված գյուղատնտեսական և շրջակա միջավայրի  
գիտությունների մագիստրոսական ծրագրի համար

Դասավանդող – Իտալիայի Տուշայի համալսարանի սննդագիտության դոկտոր  
Դավիթ Պիպոյան

Իտալիայի Տուշայի համալսարանի մագիստրոսական կրթության կազմակերպումն  
ունի իր յուրահատկությունները, որովհետև 2012թ-ից վերակազմավորվել են  
ֆակուլտետները և գործում են ինքնավար դեպարտամենտներ, որոնք ինքնուրույն  
կերպով կազմակերպում են նաև մագիստրոսական ծրագրերը և  
ընդունելությունները: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ դեպարտամենտում  
դասավանդող առարկաների ծրագրերը կազմվում են ընդհանուր հիմունքներով և  
բաժանվում բակալավրական կրթության և մագիստրոսական ծրագրերի համար:  
Եթե մագիստրոսական ծրագրի ուսանողը նշված առարկան չի ներառել իր  
բակալավրի պլանում, կամ ցանկություն ունի ներառել որպես ազատ առարկա, չկա  
որևէ սահմանափակում:

Հետաքրքիր է, որ ֆակուլտետների վերացնելուց հետո միջֆակուլտետային դեպարտամենտներ են ձևավորվել, որոնք միջառարկայան հետազոտությունների և կրթության ապահովման համար կարող են հիանալի մոդել հանդիսանալ:

Օրինակ ագրարային, բնական գիտությունների, ինչպես նաև էկոլոգիայի և կայուն զարգացման ֆակուլտետների միավորման արդյունքում ձևավորվել են երեք դեպարտամենտներ, որոնք բնապահպանական, ագրարային և սննդի անվտանգության տարբեր խնդիրների համար հետազոտությունները և կրթության ապահովման գործընթացն իրականացնում են համատեղ, քանի որ նշված ուղղությունները սերտորեն կապված են:

DIBAF – դեպարտամենտն ավելի շեշտադրում է կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի ինովացիոն հիմնախնդիրները, ինովացիոն կառավարման և կենսատեխնոլոգիաների հիմնախնդիրները: Այստեղ է դասավանդվում սննդամթերքի անվտանգություն, ինչպես նաև ագրարային և շրջակա միջավայրի գիտությունների մագիստրոսական ծրագրերի առարկաների մեծ մասը, սակայն եթե ուսանողն ուզում է իր պլանում ներառել թունաբանություն առարկան, այս առարկան դասավանդվում է էկոլոգիայի և կենսաբանության (DEB) դեպարտամենտում, քանի որ գիտական հետազոտություններն իրականացվում են նշված դեպարտամենտում, և լաբորատոր-գործնական պարապմունքների անցկացման համար, ինչպես նաև մագիստրոսական թեզերի համար նախատեսած հետազոտություններն իրականացվում են գիտական լաբորատորիաներում:

DAFNE դեպարտամենտի ծրագրերն առավելապես ուղղված են շրջակա միջավայրի և ագրարային գիտությունների ֆունդամենտալ հետազոտություններին, ինչպես նաև մագիստրոսական ծրագրերի իրականացմանը: Հաշվի առնելով, որ այս

դեպարտամենտին կից է գործում USZ – աշխարհատեղեկատվական համակարգերի լաբորատորիան, այն ուսանողները, որոնք իրենց պլանում ներառում են հեռագնման տեխնոլոգիաների ուսումնասիրում պետք է առարկան վերցնեն հենց DAFNE դեպարտամենտում:

Թունաբանություն առարկան դասավանդվում է 40 ժամով տրվում է 5 կրեդիտ

Էկոթունաբանություն առարկան դասավանդվում է 50 ժամով \*(32+18 լաբորատոր)

Կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք ցանկալի կլինի ներառել ուսումնական ծրագրում

1. Մուտագենեզները և շրջակա միջավայրի թունաբանությունը
2. ԴՆԹ-ի ալտերացիաների վրա ազդող գործոնները
3. Ռադիացիայի ազդեցությունը մուտագենեզի վրա
4. Պաշտպանական համակարգեր
5. Ֆենոտիպային գործոնները
6. Պոպուլյացիայի կենսամոնիթորինգ
7. Մուտագեն ռիսկի գնահատում

Կատարող՝ դասախոս

Դ. Պիպոյան